

Որակի հռչակագիր Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի իրացման գների ինդեքս

Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի իրացման գների ինդեքս
0.2	Ոլորտը	Արտադրողների գներ
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Բաժնի պետ Մարիամ Երիցյան Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժին Հայաստանի Հանրապետություն, 0010, Երևան, Հանրապետության պողոտա, Կառավարական շենք 3, Հեռախոս՝ +374 11 564 566 Էլ. Փոստ: <a href="mailto:mariam_yeritsyan@armstat.am">mariam_yeritsyan@armstat.am</a> , <a href="mailto:info@armstat.am">info@armstat.am</a>
0.4	Նպատակը և պատմությունը	Հիմնական նպատակն է օգտագործողներին տրամադրել արդիական տեղեկատվություն գյուղատնտեսական արտադրանք արտադրողի գների ինդեքսի վերաբերյալ: Ցուցանիշի հաշվառումն ու վարումը սկսվել է 1997 թվականից:
0.5	Օգտագործողները և կիրառումը	Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպությունները, գործարար համայնքը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն: Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի իրացման գների ինդեքսը կիրառվում է ազգային հաշիվներում որպես դեֆլյատոր, գյուղատնտեսության գների վիճակագրության տվյալների բազայի ստեղծման, գյուղատնտեսական արտադրանքի ծավալների համադրելի ցուցանիշների ստացման, ինչպես նաև համապատասխան մարմինների կողմից ագրարային քաղաքականությունը կանխորոշելու, պարենային ապահովության ռազմավարության մշակման համար: Գյուղատնտեսության արտադրանք արտադրողի իրացման գների ինդեքսների հաշվարկները կատարվում են միջազգային ստանդարտներին համապատասխան, ինչը հնարավորություն է տալիս գների վիճակագրության ոլորտում համագործակցել միջազգային կազմակերպությունների (FAO, UNDP, IMF, OECD, Eurostat) հետ, ինչպես նաև կատարել համեմատություններ միջազգային գների հետ:
0.6	Տեղեկությունների աղբյուրները	Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի իրացման գների ինդեքսների հաշվարկման համար տեղեկատվության հավաքումն իրականացվում է դիտարկման հարցաթերթի միջոցով՝ գյուղատնտեսության վիճակագրության ընտրանքային դիտարկման

		<p>դաշտում ընդգրկված 7440 գյուղացիական տնտեսություններից: Այդ նպատակով հետազոտման մեջ ընդգրկվել են ՀՀ 10 մարզերի 186 գյուղական բնակավայր, յուրաքանչյուր գյուղում, 40-ական գյուղացիական տնտեսություն: Բոլոր գյուղացիական տնտեսությունները կողավորվում են 6-անիշ համակարգով, որից՝ առաջին երկու նիշերը համապատասխան մարզերի ծածկագրերն են, հաջորդ երկու նիշը գյուղի ծածկագիրն է, իսկ վերջին երկու նիշը՝ գյուղացիական տնտեսության: Հետագա հաշվարկների մեջ բոլոր գյուղացիական տնտեսությունները հանդես են գալիս այդ կողերով, ինչն էլ ապահովում է նրանց կողմից հաղորդած տվյալների գաղտնիությունը:</p> <p>Տվյալները հավաքվում են ամսական պարբերականությամբ՝ ամսվա ընթացքում 2 անգամ՝ 15-ին և 30/31-ին ինչպես նաև դրանց մոտակա օրերին, վիճակագրի գյուղացիական տնտեսություն այցելելու միջոցով: Այցելության ընթացքում վիճակագիրն արձանագրում է նախորդ 15 օրվա ընթացքում իրացված գյուղատնտեսական արտադրանքի քանակի և գնի (միջին գնի) մասին ցուցանիշներ գյուղատնտեսական արտադրանքի՝ անհատ քաղաքացիներին և շուկայում: Վիճակագիրը գների արձանագրման ժամանակ կատարում է որոշակի ստուգաճշտումներ (քանակի և գնի) մեկ միավոր գնի ճիշտ որոշման և գրանցման համար: Լրացված հարցաթերթերը ներկայացվում են Արմստատի տարածքային ստորաբաժանումներ, այնուհետև մարզային վարչություններ, որտեղ ստացվող տեղեկատվությունը միավորվում է մեկ միասնական տվյալների բազայում համապատասխան համակարգչային ծրագրերի միջոցով:</p>
0.7	Տվյալների հավաքման իրավական լիազորությունը	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից ընդունված 2019թ. նոյեմբերի 20-ի թիվ 36-Ա որոշման հիման վրա:
0.8	Ռեեսպոնդենտների (ծանրաբեռնվածությունը	Ռեեսպոնդենտների ծանրաբեռնվածություն չի հաշվարկվում:
<b>1 Բովանդակություն</b>		
1.1	Բովանդակության նկարագիրը	Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի իրացման գների ինդեքսն արտահայտում է արտադրանք արտադրողների իրացված արտադրանքի գների փոփոխությունները ժամանակի, ինչպես նաև տարածության մեջ: Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի իրացման գների ինդեքսները (տոկոսներով) ամսական պարբերականությամբ հաշվարկվում են հետևյալ կտրվածքներով՝

		<ul style="list-style-type: none"> <li>• հաշվետու ամիսը նախորդ ամսվա նկատմամբ,</li> <li>• հաշվետու ամիսը նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ,</li> <li>• հաշվետու ամիսը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ,</li> <li>• աճողական կարգով (նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ:</li> </ul> <p>Եռամսյակային պարբերականությամբ`</p> <ul style="list-style-type: none"> <li>• եռամսյակը նախորդ եռամսյակի նկատմամբ,</li> <li>• եռամսյակը նախորդ տարվա համապատասխան եռամսյակի նկատմամբ:</li> </ul>
1.2	Վիճակագրական հասկացություններ	<p><b>Համակցություն</b></p> <p>Գյուղատնտեսության արտադրանք արտադրողի իրացման գների ինդեքսի հաշվարկման համար իրականացվել է ընտրանք, որտեղ առաջին փուլում յուրաքանչյուր մարզից ընտրվել են գյուղական բնակավայրեր, որոնց քանակը որոշվել է հաշվի առնելով մարզի գյուղական բնակչության թվաքանակը:</p> <p>Ընտրանքի երկրորդ փուլում ընտրվել են դիտարկվող գյուղացիական տնտեսությունները` ընտրանքի սիստեմատիկ մեթոդով: Այսպիսով, գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման դաշտում ընդգրկվել է 7440 գյուղացիական տնտեսություն (186 գյուղական բնակավայր, յուրաքանչյուր գյուղում 40-ական առավել ներկայացուցչական գյուղացիական տնտեսություն):</p> <p><i>Ճյուղային ընդգրկունություն</i></p> <p>Վիճակագրական դիտարկումները ներառում են Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի (ՏԳՏՀԴ խմբ.2)` գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն (բաժին Ա) բաժնի` գյուղատնտեսության հատվածը:</p> <p>Աշխարհագրական ընդգրկունություն</p> <p>Ընդգրկում է Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերը:</p> <p>Ապրանքի ընդգրկունություն</p> <p>Ապրանքների ցանկը որոշվել է հաշվի առնելով գյուղացիական տնտեսությունների կողմից մշակվող և արտադրության ծավալով համեմատաբար մեծ ծավալ ունեցող արտադրատեսակները:</p> <p>Փոփոխականներ</p>

		<p><u>Գներ.</u> Գյուղատնտեսության արտադրանքի իրացման միջին կշռված գինն է:</p> <p><u>Ինդեքսներ.</u> Չուտ գնային փոփոխությունն արտացոլող ցուցանիշներ:</p> <p>Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի իրացման գների ինդեքսի հաշվարկման համար որպես տեսակարար կշիռ օգտագործվել են տվյալ ամսում իրացված (վաճառված) արտադրանքի ծավալային ցուցանիշները: Միաժամանակ այդ ցուցանիշներն անհրաժեշտ են միջին կշռված գների հաշվարկման համար:</p> <p>Վիճակագրական չափորոշիչներ</p> <p>Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի իրացման գների ինդեքսը հաշվարկվում է 58 ապրանքների համար, որոնք խմբավորվում են 12 ապրանքախմբերում՝ հացահատիկային, տեխնիկական, կարտոֆիլ և բանջարաբոստանային, կերային, միրգ, պտուղ և հատապտուղ, բոստանային, մեղր, միս (սպանդային քաշով), կաթ և կաթնամթերք, ձու, բուրդ, կաշվեհումք:</p> <p>Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի իրացման գների ինդեքսը հաշվարկվում է նաև անասնապահության և բուսաբուծության համար:</p> <p>Հաշվի առնելով գյուղատնտեսության արտադրության սեզոնային բնույթը, գների ինդեքսները հաշվարկվում են Պաաշեի բանաձևով, հիմք ընդունելով տվյալ ամսում իրացված (վաճառված) արտադրանքի քանակը և ծավալը:</p> <p>Խմբավորումները</p> <p>Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի իրացման գների ինդեքսները հրապարակվում են յուրաքանչյուր ամսվա համար հանրապետության և մարզի կտրվածքով:</p>
2. Ժամանակայնություն		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Ամսական
2.2	Հրապարակման ամսաթիվը	Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի իրացման գների ինդեքսները ամփոփ տարբերակով ամսական տվյալները հրապարակվում են հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 25-րդ օրը, իսկ ընդարձակ տարբերակով՝ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 35/36-րդ օրը:
2.3	Ճշտապահություն	Տվյալները հրապարակվում են տարեկան ծրագրերով հրապարակման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներից ուշացումներ չեն արձանագրվել:

2.4	Հաճախականությունը	Ամսական
3. Ճշգրտություն		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	Տեղեկատվությունը տրամադրում են գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման դաշտում ընդգրկված 7440 գյուղացիական տնտեսությունները: Տեղեկատվության հավաքումից հետո վիճակագրական ցուցանիշներն ենթարկվում են թվաբանական և տրամաբանական ստուգումների: Ստուգման արդյունքում ի հայտ եկած սխալները ճշտվում են մարզային վարչությունների համապատասխան աշխատակիցների, անհրաժեշտության դեպքում նաև տեղեկատվություն ներկայացնող համապատասխան վիճակագրերի կամ անմիջապես տնային տնտեսությունների հետ:
3.2	Անճշտության աղբյուրները	Անճշտության աղբյուր կարող է լինել. 1. գյուղացիական տնտեսությունների կողմից ներկայացված թերի, ոչ տրամաբանական կամ աղավաղումներով գնային տեղեկատվությունը, 2. ոչ ճիշտ կողմավորված տեղեկատվությունը:
3.3	Ճշգրտության չափումները/ չափելիությունը	Տեղեկատվության արժանահավատությունը ստուգելու համար իրականացվում են ընտրանքային ստուգաճշտումներ գյուղական համայնքներում: Հաշվետու ժամանակահատվածում ներկայացված տվյալները համեմատվում են նախորդ ամսվա տվյալների հետ:
4. Համադրելիություն		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Պատմական ժամանակագրական տվյալները առկա են 1997 թվականից: Սկզբում գյուղատնտեսության ընտրանքային հետազոտության դիտարկման մեջ ներգրավված են եղել 1360 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ: Սակայն յուրաքանչյուր չորս տարին մեկ ընտրանքային դաշտը ընդլայնվել է և 2017թ. այն հասել է 7440 տնտեսության՝ 186 գյուղական բնակավայր, յուրաքանչյուր գյուղում 40-ական գյուղացիական տնտեսություն: Վիճակագրական դիտարկումները ներառում են «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից ընդունված 2019թ. նոյեմբերի 20-ի թիվ 36-Ա որոշման հիման վրա:
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	Հայաստանի Հանրապետությունում հաշվարկվում է միայն մեկ գյուղատնտեսական արտադրանք արտադրողի իրացման գների ինդեքս, ուստի այն համադրելի չէ այլ գնային ինդեքսների հետ:
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	Հրապարակված տվյալներն համարվում են վերջնական:
5. Մասշեղիություն		

5.1	Տարածման ձևաչափ	<p><b>Հրապարակումներ</b></p> <p><b>Նորությունների թողարկում</b></p> <p>«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող տվյալները հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ» (հայերեն, ռուսերեն, անգլերեն):</p> <p>Ամսական, եռամսյակային հրապարակումներ</p> <p>«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական- ամսական, եռամսյակային զեկույց (հայերեն, ռուսերեն):</p> <p><b>Տարեկան հրապարակումներ</b></p> <p>«Հայաստանի վիճակագրական տարեգիրք» (հայերեն, ռուսերեն, անգլերեն):</p> <p>«Հայաստանը թվերով» վիճակագրական ժողովածու (հայերեն, անգլերեն):</p> <p>«Գները և գների ինդեքսները ՀՀ-ում» վիճակագրական ժողովածու (հայերեն, անգլերեն ):</p> <p><b>Ինտերնետային հասցե</b></p> <p>Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն (ամբողջական), ռուսերեն, անգլերեն, հետևյալ հասցեով.  <a href="http://www.armstat.am/am/?nid=82">http://www.armstat.am/am/?nid=82:</a></p> <p>Ամսական և պատմական տվյալները հասանելի են հայերեն (ամբողջական), անգլերեն լեզուներով, հետևյալ հասցեով.  <a href="https://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6&amp;rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6">https://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6&amp;rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6:</a></p>
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	<p>Ռեսպոնդենտներից (գյուղացիական տնտեսություններից), հավաքվող տեղեկատվությունը պահպանվում է էլեկտրոնային եղանակով՝ Արմստատում, իսկ թղթային տարբերակը՝ վիճակագրական մարզային վարչություններում:</p> <p>Էլեկտրոնային շտեմարանները ներառում են՝</p> <ul style="list-style-type: none"> <li>ա/մարզերի տեղեկագիր,</li> <li>բ/ տարածաշրջանների տեղեկագիր,</li> <li>գ/ բնակավայրերի տեղեկագիր,</li> <li>դ/տնտեսությունների տեղեկագիր,</li> <li>ե/կատեգորիաների ցանկ (ըստ իրացման ուղիների),</li> <li>զ/խմբերի ցանկ (ըստ իրացման ուղիների),</li> <li>է/ապրանքատեսակների ցանկ (ըստ իրացման ուղիների),</li> <li>ը/չափի միավորի ցանկ,</li> </ul>

		թ/գնային տեղեկատվություն (ըստ իրացման ուղիների քանակ և ծավալ):
5.3	Փաստաթղթավորումը	Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ <a href="https://www.armstat.am/am/?nid=373">https://www.armstat.am/am/?nid=373</a> :
5.4	Այլ տեղեկատվություն	Այլ տեղեկատվություն հասանելի չէ:
6. Լրացուցիչ փաստաթղթավորում		
6.1		Լրացուցիչ փաստաթղթեր հասանելի չեն: